Ի ՏԵՐ ՀԱՆԳՅԱՎ
ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՏՐԴԱՏ ԱԲԵՂԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ

Հունիսի 25-ին, երկարատև ծանր հիվանդությունից հետո, վախճանվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Տրդատ աբեղա Մարտիրոսյանը:

Տ. Տրդատ աբեղա Մարտիրոսյանը (ավազանի անունը՝ Հովհաննես) ծնվել է 1973 թ. դեկտեմբերի 23-ին Էջմիածին քաղաքում:

1979-1989 թթ. սովորել և ավարտել է Էջմիածնի հմր 9 միջնակարգ դպրոցը:

1989 թ. ընդունվել և 1995 թ. ավարտել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը՝ պաշտպանելով ավարտաճառ «Գրիգոր Լուսավորիչը հայ մատենագրության մեջ» թեմայով:

1995 թ. հոկտեմբերի 22-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանի:

1996 թ. հունիսի 2-ին Մայր Աթոռում, ձեռամբ Տ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

Ձեռնադրությունից հետո Հոգեշնորհ Հայր Սուրբը ծառայել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում, որպես վերակացու: Այնուհետև նշանակվել է Բուլղարիայի հայոց թեմում՝ Պլովդիվում որպես հոգևոր հովիվ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ողջ միաբանությունը խորապես սգում են երիտասարդ հավատավոր ու նվիրյալ միաբանի վաղաժամ մահը:

Հոգելույս Հայր Սուրբի մարմինը հունիսի 26-ին դրվեց Ս. Գայանե վանքում՝ հրաժեշտի համար: Հունիսի 27-ին, ժամը 10.00-ին, հընթացս Ս. Պատարագի կատարվեցին հանգուցյալ Հայր Սուրբի վերջին օծման և հուղարկավորության արարողությունները: Հայր Սուրբի մարմինը ամփոփվեց Ս. Գայանեի միաբանական գերեզմանատանը:

«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»: